

եւ կը գրէր Թէոփիստեայ՝ թէ Հայոց «ամենայն որովայնամուրք» նախանձեցան Յունաց կերակրոց, եւ պահոց օրերն աւնոնց պէս կը ճաշակեն գինի, ձեր եւ ձուկն (Թէոփ. 280-1): Նաեւ Գր. Մագիստրոս առ Թոռնիկ մամիկոնեան նամակին մէջ յիշելով անոր ձկնակերութիւնն ուրբաթ օր, զայն արդիւնք կը համարի անոր քաղկեդոնականութեան (Մագ. 214-5): Հին դարերու անձանօթութիւնն այսպիսի սխալ հետեւութիւններ հանել կու տար ազոնց՝ չափաւոր պահեցողութեան ծագման մասին:

Իրաւունք ունէին միայն զինւոյ նկատմամբ, որ ստուգիւ նորամուտ էր: Բայց թէ այս եւ թէ միւս նիւթերն յարատեւեցին մնալ: Լամբրոնացւոյն ներբողիչ մ'անոր առաքինութեան իբր ցոյց՝ կը յիշէ չուտելն «ոչ ձէթ եւ ոչ գինի, ոչ ձուկն եւ ոչ թան. այլ միայն ընդօր շատանայր» (Հյպտ. 420): Ուրեմն ուրիշներ չէին ըզգուշանար ազոցմէ, որով Տարսոնի առաքինի եպիսկոպոսին ընթացքն ուշադրութիւն կը գրաւէր: Բայց իւր օրինակն՝ աւելի խստացած պահպանութիւնն էր կանոնի մը՝ որ հայ եկեղեցականաց կ'արգելուր ձուկն ու գինի. ինչպէս կ'իմանանք նոյն շրջանի Հայոց Յոյներէն պա-